

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻՊԵՄՁԱ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ  
ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

14 հունիսի 2013 թվական

գ. Անիպեմզա

Համաձայն Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2012 թվականի դեկտեմբերի 28-ի «Վարչական հսկողության 2013 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին» թիվ 190-Ա հրամանի և ի կատարումն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2013 թվականի մայիսի 29-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիպեմզա համայնքում վարչական հսկողություն իրականացնելու մասին» թիվ 49 կարգադրության, աշխատանքային խումբը մասնակցությամբ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Լիպարիտ Մարտիրոսյանի (խմբի ղեկավար), Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ Հուրիկ Մարտիրոսյանի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի գլխավոր մասնագետ Գագիկ Հարությունյանի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի (մարզային հողային պետական տեսչության) գլխավոր մասնագետ Արտյոմ Սարգսյանի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի գլխավոր մասնագետ Հայկ Սարգսյանի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության հարցերի բաժնի առաջատար մասնագետ Արթուր Գրիգորյանի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ Արմեն Հարությունյանի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիպեմզա համայնքի ղեկավար Հարություն Թառլանյանի, Անիպեմզա համայնքում կատարել է վարչական հսկողություն, որն ընդգրկել է 2010 թվականի մայիսի 1-ից մինչև 2013 թվականի հունիսի 1-ն ընկած ժամանակաշրջանը:

Վարչական հսկողությունն սկսվել է 2013 թվականի հունիսի 3-ին և ավարտվել՝ 2013 թվականի հունիսի 7-ին:

**Վարչական հսկողության արդյունքում պարզվել է հետևյալը.**

1) «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն, համայնքի ավագանին ընդունել է իր կանոնակարգը (28.11.2012թ. արձ. թիվ 10, որոշում թիվ 15-Ն).

2) Համայնքի ավագանու կողմից հաստատված (27.01.2009թ. արձ. թիվ 1) 2009-2012թթ. սոցիալ-տնտեսական զարգացման քառամյա ծրագրում ընդգրկված ներհամայնքային ճանապարհների բարեկարգման աշխատանքները չնայած կատարվել են, սակայն այժմ դրանք